

Զարիկ Ս. Իևս

ԱԴՐԲԵՋԱՆՑՈՒ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության առաջին տարիներին, ինչպես ամբողջ սովետական գրականության, այնպես էլ սովետահայ գրականության մեջ, նոր կյանքը, սովետական իրականությունը արտացոլող երկերի հետ միասին ստեղծվեցին նաև նախահեղափոխական ժամանակաշրջանը պատկերող գործեր:

Սովետահայ գրողների՝ ժողովուրդների նախահեղափոխական ժամանակաշրջանի կյանքը արտացոլող երկերի մեջ այս կամ այն կերպ ադրբեջանական կյանքը պատկերող ստեղծագործությունների թիվը համեմատաբար ավելի շատ է:

Դա բնական է, որովհետև «մի միասնական ժողովուրդ հանդիսացող» (Ջ. Ջաբբարի) ադրբեջանական և հայ ժողովուրդները դարեր շարունակ ձրնշվել են միևնույն բնակավայրի լծի տակ, միասին պայքարել նույն երազանքների և ակնկալությունների իրագործման համար, իրենց ապրելաձևով, ադաթներով, սովորություններով ու կենցաղով միշտ էլ մոտ են եղել իրար: Ահա թե ինչու ունիստ գրողը, հավատարիմ մնալով սյառմական ճշմարտությանը, դարերի վեր իրար դրկից հայ կամ ադրբեջանական ժողովրդի կյանքը պատկերելիս չեր կարող այդ ժողովուրդներին ներկայացնել իրարից անջատ: Ադրբեջանական ժողովրդի անցյալին նվիրված երկերում հայ աշխատավորների, հայ ժողովրդի անցյալին նվիրված երկերում ադրբեջանցի աշխատավորների մասին խոսել նշանակում է հավատարիմ մնալ կյանքի ճշմարտությանը:

Դրա համար էլ ժողովուրդների անցյալին նվիրված համարյա բոլոր երկերում ստեղծվել են երկու ժողովուրդների ներկայացուցիչների կերպարներ:

Այդ տեսակետից առանձնապես հետաքրքիր են Ավ. Իսահակյանի «Բայրամալի» (1924), «Համբերանքի չիրուխը» (1929), Մ. Արազու «Դուշմանի երգը» (1925), Ս. Ջորյանի «Երգը» (1922), Ա. Բակունցի «Եղբայրության ընկուզենիները» (1935) երկերը:

Տարբեր թեմաների ու պրոբլեմների նվիրված այդ ստեղծագործությունների հիմնական գաղափարը ժողովուրդների անխախտ բարեկամությունն ու եղբայրությունն է:

Իսահակյանը «Բայրամալի» պատմվածքը գրել է դեռևս վեցնետիկում եղած ժամանակ: Հետաքրքիրն այն է, որ շնայած մեծ վարպետը շատ հեռու էր գտնվում Կովկասից և կովկասցի հին հարևան ադրբեջանցիներից, դարձյալ չի մոռացել «հավատով տարբեր» («Дни айры») իր եղբայրներին և հատուկ պատմվածք է գրել Բայրամալիի կյանքի մասին:

Պատմվածքի հերոս Բայրամալին սիրում է Մեհդի բեկի միակ դստեր՝ Մահնուր խանումին և սիրվում նրա կողմից: Սակայն դասակարգային հասա-

րականագում, որտեղ սերն ու զղացմունքները, փառքն ու պատիվը հարըստությամբ էր չափվում, աղքատ Բայրամալին չի կարողանում ամուսնանալ հարուստ Մեհդի բեկի աղջկա հետ: «Անհաշիվ ոչխարի, տավարի, ձիու տեր» Մեհդի բեկը ոչ միայն իր աղջկանը չի տալիս «սարի որսկան», «Բիր դաշ, բիր բաշ» (մի քար, մի գլուխ) Բայրամալին, այլև իր մարդկանց օգնությամբ ձերբակալել է տալիս նրան, աքսորում Սիրիի:

Հասարակական շարիք հանդիսացող նյութական անհավասարությունը, որ անցյալում սլատճառ է դարձել շատ-շատերի անմուրաղ սիրո, դառնում է նաև Բայրամալիի դժբախտության սլատճառը: Թեև Բայրամալին շարժանանալով իր սիրույն, աքսորվում է Սիրիի, բայց նա իր բարոյական մաքրության և արժանապատվությամբ Մեհդի բեկերից և ցարական սլաշտոնյաներից շատ բարձր է կանգնած: Նյութապես աղքատ Բայրամալին բարոյական տեսակետից նրանցից շատ ավելի հարուստ է:

Իսահակյանը Բայրամալին սլատկերում է մարդկային առաքինի հատկություններով «իգիթ», «կուրիճ», «բաջ»:

Չնայած պատմվածքի ժանրը հնարավորություն չի տալիս լայն նկարագրությունների, բայց և այնպես մեծ զորողը առանձին մանրամասներով այնպես է պատկերել Բայրամալին, որ կարողացել է հրաշալի կերպով բացահայտել նրա ամբողջ մարդկային էությունը:

Իսահակյանի կերտած աղբյուրների Միրզա Մեհդին («Համբերանքի չիբուխը») դրական հատկություններով օժտված հերոս է: Եթե Բայրամալին «իգիթ, կուրիճ, բաջ» է, ապա Միրզա Մեհդին «Իմաստուն մարդ է», «խելքի ծով»:

Երկու պատմվածքներում էլ նկարագրված է բանտի կյանքը: «Համբերանքի չիբուխը» պատմվածքում նույնպես հասարակ, աղքատ աշխատավորները իրենց մարդկային գծերով սլաշտոնյաներից և հարուստներից ավելի բարձր են կանգնած:

Օհան ամին, որը չի կարողանում անտարբեր նայել գյուղում օրեցօր աճող անարդարություններին, այն Օհան ամին, որը սոցիալական անարդարությունների պատճառով կոպտ է բեկերի և աղալարների դեմ ու բանտ ընկնում, այստեղ մի շարք «գրեյ-կարդալ գիտցողների» հետ է ծանոթանում, իսկ աղբյուրների Միրզա Մեհդու հետ խիստ մտերմանում է: Երկուսի միջև այնպիսի ամուր բարեկամություն է հաստատվում, որ Օհան ամին բանտից աղատվելուց քսան տարի հետո էլ Միրզա Մեհդուն չի մոռանում: Ամեն անգամ նրա մասին խոսք բացվելիս ասում է.

«Նա աջամ (աղբյուրների—Ձ. Ա.) էր: ...Երկու տարի իրար հետ շատ սիրով ապրանք կողք-կողքի, մեկ ամանից էինք ուտում: Իմ ու քու շունեինք... ազնիվ, պատվական մարդ էր, իմաստուն մարդ էր, խելքի ծով, շատ երևելի խոսքեր ուներ, քաշներ համբերանքի չիբուխ մինչև աղատության դուռը բացվի»¹:

Պատմվածքում թե՛ Օհան ամին և թե՛ Միրզա Մեհդին սոցիալական անարդարության, իրավադրկության սլատճառը տեսնում են «մեկը կուտե, մեկելը կաշե» սկզբունքի մեջ:

¹ Ա. Վ. Իսահակյան, Պատմվածքներ, լեզնեղներ, Հայսյետհրատ, Երևան, 1962, էջ 58:

Միրզա Մեհդին և Օհան ամին դասակարգային հասարակության մեջ ար-
սախում հարստահարիչների բռնություններն ու հալածանքները տեսած և
իրենց ապրած ժամանակաշրջանից դժգոհ մարդիկ են: Երկուսն էլ երջանիկ,
ազատ կյանքի մասին ուտոպիկ երազանքներով ապրող, միայն ռոմանտիկ
խոհերով տարված, «ազատության դռան բացվելուն» սպասող աշխատա-
վորներ են:

«Ազատության դռան բացվելու» նկատմամբ Օհան ամու և Միրզա Մեհ-
դու ունեցած հույսը ցույց է տալիս, որ անարդար հասարակարգում ապրող
համեստ աշխատավորները, դիմանալով կյանքի ամեն տեսակի դժվարու-
թյուններին, ապրում են գալիք լավ օրերի հույսով:

Պատմվածքից բխող հիմնական եզրահանգումը—Միրզա մեհդիններին
և Ռհան ամիններին միացնող, նրանց բարեկամ ու եղբայր դարձնող շահերի,
երազանքների ընդհանրությունն է, բռնության և շահագործման, անարդա-
րության և անիրավության, տիրող կարգի դեմ եղած նրանց ատելությունն է
և «ազատության դռան բացվելու» մեծ հույսը:

Ինչպես առաջին պատմվածքում, «Համբերանքի չիբուխում» ևս քննա-
դատվում են սոցիալական իրավակարգը և իշխող դասակարգերը:

Երկու պատմվածքներն էլ ունեն կուռ սյուժե, գեղեցիկ նկարագրություն-
ներ ու բավական հյուսիս լեզու: Դրա համար էլ սկզբից մինչև վերջ կարդաց-
վում են մեծ հետաքրքրությամբ:

Իսահակյանն իր արձակ գործերում հերոսի մտքերը, հույզերը, նրա հո-
գեկան վիճակը երբեմն բանաստեղծությամբ է արտահայտում: Այս առանձ-
նահատկությանը կարելի է հանդիպել վերոհիշյալ երկու պատմվածքներում:
Հիշենք «Համբերանքի չիբուխում» Միրզա Մեհդիի խոսքերը, որ նա շուտ-
շուտ կրկնում է բանտում.

Վանաչ դաշտի պարզ հովիկը

Շահի ոսկե քոշքից լավ է:

Քրտինքովդ կերած հացը

Սուլթանների հաշից լավ է:

Շահիրների մույամներից

Քամու ազառ շունչը լավ է:

Հարուստ, հպարտ ախպորիցդ

Սրտամոտ օտարը լավ է:

* * *

Եվ «աշղների Բայրամալու վրա կապած խաղը»

Սարի ամպը գոռուն-գոռուն կը գոռա,

Բայրամալին սարին թառած կը գոռա,

Է՛յ, Մեհդի բեկ, մուրազս մի ավիրե,

Որձ ոչխարը դանակից չի վախենա:

Ջան Մահնուր խանում, ջեննաթի փերի,

Քո մուգ աչքերին գերի եմ, գերի:

Բերված երկու բանաստեղծություններն էլ ինքնատիպ գործեր են:

Իսահակյանի արձակ երկերում ավելորդ խոսքեր, արտահայտություն-
ներ, նկարագրություններ չկան:

Այդ տեսակետից առանձնապես աչքի է ընկնում «Բայրամալի» պատմըվածքը: Այստեղ հեղինակը, ընթերցողի ուշադրությունը չցրելու համար, բոլոր մտքերը կենտրոնացնում է հերոսի հետ պատահած դեպքերի նկարագրության շուրջը: Երկարաբանությունից, շատախոսությունից, ճոռմաբանությունից, կրկնությունից, ավելորդ խոսքերից ու նկարագրություններից հեռու լինելու պատճառով Իսահակյանի արձակ երկերի մասին ժողովուրդը ասում է «Թռչունի կտուցի չափ կարճ է»:

«Բայրամալի» պատմըվածքում (որտեղ պատմությունը տարվում է երրորդ դեմքով՝ ադրբեջանցի Քյարիմի լեզվով) գործ են ածված այսպիսի ադրբեջանական բառեր ու արտահայտություններ, որոնք ավելի են խտացնում ազգային կոլորիտը:

«Համբերանքի չիբուխը» գրված է հայ կլասիկ գրականության մեջ լայնորեն տարածված նովելի ձևով: Գրողից մեծ պատասխանատվություն պահանջող նովելի ժանրի առանձնահատկությունները, ընթերցողին լարված պահող հետաքրքիր բովանդակությունը, հանգուցի անսպասելի լուծումը «Համբերանքի չիբուխի» մեջ պարզ երևում է: Այդ պատմըվածքը ավարտվում է անսպասելի մի դրամատիկ հանգուցալուծումով, որ միանգամայն համապատասխանում է նովելի պահանջներին:

Բայրամալիին «Իգիթ», «Կտրիճ», «Քաջ», Միրզա Մեհդիին «Խելքի ծով», «Իմաստուն» և այլ դրական հատկություններով պատկերելը բխում է ադրբեջանական ժողովրդի նկատմամբ մեծ վարպետի ունեցած անկեղծ սիրուց: Իսահակյանի սերը ադրբեջանական ժողովրդի նկատմամբ սահմանափակել միայն այդ երկու պատմըվածքով, իհարկե, ճիշտ չի լինի:

«Իսահակյանը, — ասել է Սամեդ Վուրդունը, — մի առանձին սիրով է սիրում ադրբեջանական ժողովրդական պոեզիան, մեր բայաթիները և շիրվան-տաները, մեր իմաստուն առածները անգիր ասում է ադրբեջաներեն: Դա մի անգամ ևս ապացուցում է, որ մեր եղբայրական ժողովուրդների գեղարվեստական ճաշակները, նրանց կյանքի ու ճակատագրի պես, վերին աստիճանի նման են իրար»:

Ադրբեջանական ժողովրդական բանաստեղծի այս խոսքերը ցույց են տալիս Իսահակյանի ջերմ վերաբերմունքը ադրբեջանական ժողովրդի բառ ու բանի նկատմամբ և այն, թե որքան բարձր է գնահատում ադրբեջանական ժողովուրդը մեծ արվեստագետին:

Ադրբեջանցիների կերպարների մենք հանդիպում ենք նաև Մ. Արազու երկերում: Նրա «Դուշմանի երգը» (1925) պատմըվածքի հերոս Ալին ևս անցյալի սոցիալական անարդարության ղոհերից է: Հողի պատճառով նա վեճի է բռնվում խանի հետ: Խանի մարդիկ ծեծելով նրան, կուրացնում են մի աչքը և «քշում գյուղից»: Ալին, սակայն, դեռևս չի գիտակցում իր դասակարգային շահերը: Նա բուլշևիկների դեմ զործողների ոխերիմ թշնամիների հորինած երգերը երգելով, փող է հավաքում հարուստներից, այսինքն գործում է նրանց օգտին, ովքեր իրեն նետել են այդքան ծանր վիճակի մեջ:

Տաղանդավոր արձակագիրը այդ պատմըվածքում Ալիի ծանր վիճակը, նրա կրած տառապանքները նկարագրել է այնքան հուզական եղանակներով, որ ընթերցողի մեջ խոր ատելություն է առաջ բերում ժամանակի սոցիալական անարդարությունների դեմ:

«Կարգաշ, լավ իմացիր, մեջքս կոտրած, կոնդ եմ ես. մի շաբթից հետո կնիկս սրտաճաք եղավ, մեռավ, ինձ էլ ոնց որ մի կենդանու լեշ դուրս դնեցին մեր գյուղիցը... երեխեքս էլ... էհ, ինչ ասեմ, սոված, ծարավ մնացին իսկիսի դռներին, հիվանդացան ու քոչեցին էս աշխարհից»...

1918 թվականին, Ռուսաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, Անդրկովկասում ժողովուրդների ոխերիմ թշնամիները եթե մի կողմից աշխատում էին աշխատավորների աչքում վարկաբեկել բոլշևիկներին, ապա մյուս կողմից նրանք ձգտում էին իրար դեմ հանել երկու հարադատ հարևան ժողովուրդներին՝ հայերին և ադրբեջանցիներին, որպեսզի առիթից օգտվելով, կատարեն իրենց սև գործը։ Այդ օրերին բոլշևիկյան կուսակցությունը մամուլի միջոցով մերկացնում էր դաշնականների և մուսավաթականների արյունոտ որոգայթները՝ բացելով ժողովրդի աչքերը։ Այդ մեծ և աղնիվ գործում բոլշևիկների կուսակցությանը օգնում էին առաջավոր գրողները։ Օգտվելով գեղարվեստական խոսքի ուժից, հայ և ադրբեջանական ժողովուրդների լավագույն դավաճանները ժողովուրդներին եղբայրության ու բարեկամության էին կոչում։

Մարքսիստական-լենինյան գրականագիտությունը սովորեցնում է, որ գրականությունը արտացոլում է կյանքը, կյանքի երևույթները՝ դրանք գիտելով որոշ աշխարհայացքով։ Այդ տեսակետից շատ հետաքրքիր է ծանոթանալ Մտեփան Զորյանի 1919 թվականին գրած «Ռումանտիկ պատմությունը» և Զալիլ Մամեդ Կուլիդադեի «Քյամանչա» երկերին, որ նա գրել է 1920 թվականի հունվարին, մուսավաթական արյունոտ իշխանության օրերին։ Ազգային կուսակցությունների ստոր քաղաքականության ժամանակաշրջանում ժողովուրդների միջև միասնությունն ուտեղծելու նպատակով գրված այսպիսի երկերը հնչում էին որպես մարտական երգեր։ Զորյանը «Ռումանտիկ պատմության» մեջ քնարական ջերմությամբ պատկերելով ադրբեջանցի Ալիի և հայ Կատարի բյուրեղի պես մաքուր ու ջինջ սերը և այն դարձնելով պատմելի և անսասան սերը, դրանով իսկ ցանկացել է արձագանքել ժամանակի ամենահրատապ հարցերից մեկին՝ մեր ժողովուրդների բարեկամության ու միասնության ամրապնդման համար մղվող պայքարին։ Զորյանը իրեն հատուկ մեծ վարպետությամբ, վերին աստիճանի պարզ, բայց խոր ընդհանրացումներով նկարագրելով դեպքերը, դրանք սերտորեն կապել է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդական կյանքի ռեալ պատկերների հետ և պատմվածքի հիմնական գաղափարը՝ ժողովուրդների բարեկամությունը երկի վերջում ցույց է տվել ավելի ցայտուն կերպով։

Պատմվածքի ֆինալը բավական հետաքրքիր է։ Ալիի և Կատարի սիրո պատմությունից հետո տարիներ են անցնում։ Վրա է հասնում 1919 թվականը, երբ դաշնակցական ու մուսավաթական բախտախնդիրները փորձում էին իրար դեմ հանել հայ և ադրբեջանցի աշխատավորներին։ Ալին ճանաչում է

Կատարի հորեղբոր տղային՝ Սենոյին: «Հրացանը մի իրողմ նետելով, գոչում է. «Այ Սենո ջան, վայ, Սենո ջան... էգ ինչ մեծացել ես...»: Ապա գրկելով Սենոյին, համբուրում է նրան. «— Դե, Սենո ջան, էլ մի կաղնի, գնա... փախի...» օգնում է, որպեսզի նա փախչի, ազատվի:

Պատմվածքի այս ձևով ավարտվելը ցույց է տալիս, որ քանի հայ և ադրբեջանցի աշխատավորները ապրում են, կան, նրանց հետ կապի և դարերի մեջ խոր արմատներ ձգած նրանց բարեկամությունը: Այդ բարեկամությունը, դիմանալով մեծ փորձությունների, գնալով ավելի է ամրապնդվել և դարձել հայ ու ադրբեջանցի առաջավոր գրողների սիրած թեման:

Հայտնի է, որ Հովհ. Թումանյանը, որը երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար հսկայական աշխատանք է տարել, մտադիր էր մի ծավալուն երկ գրել հայ և ադրբեջանական ընդհարումների ժամանակաշրջանի վեպերով: Դժբախտաբար այդ երկը չգրվեց, այլապես նա կլինեք մեր ժողովուրդների բարեկամությունն արտացոլող երկերի գլուխգործոցը:

Ադրբեջանական գրականության մեջ այդպիսի գլուխգործոց է «Սովետական ժամանակաշրջանում անդրկովկասյան դրամատուրգիայում նմանը չունեցող» սանդղակովկասյան ժողովուրդների եղբայրությունը գովերգող» «1905 թվականին»³ պիեսը: Զ. Զաքարյան իր մի գրության մեջ ասում է, որ ընտրել է հենց 1905 թվականը—ազգային ընդհարումների շրջանը՝ ցարիզմի արյունոտ քաղաքականությունը մերկացնելու համար:

20—30-ական թվականների սովետահայ արձակում, առանձնապես Ստեփան Զորյանի և Ալսեյ Բակունցի ստեղծագործությունների մեջ, խոր արտացոլում է գտել հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը:

Երկու գրողներն էլ տարբեր առիթներով անդրադառնալով այդ թեմային, մերկացրել են ազգային կուսակցությունների այլանդակ դեմքը: Ըստ որում դեպքերը նկարագրելիս նրանք միշտ էլ ժողովուրդների բարեկամության հարցերը քաշել են առաջին պլանի վրա:

Զ. Մամեդկուլիզադեի «Քյամանչա» պիեսը և Ս. Զորյանի «Երգը»⁴ պատմվածքը (1922) գրված են նույն թեմայով: «Քյամանչայում» հայ Բախշու քյամանչայի վրա նվազած երաժշտությունը, «Երգում» ադրբեջանցու երգած բայաթին «անցած օրերը բերում, կանգնեցնում են մարդու առաջ» («Քյամանչա») և դադարեցնում կրակոցները:

Երաժշտության ու երգի ազդեցությամբ կրակոցների դադարեցումը ամենևին էլ պատահականություն չէ: Դարեր շարունակ իրար դուռ-դրվից հայի և ադրբեջանցու երգն ու երաժշտությունը դարձել են երկու ժողովրդի սեփականությունը: Երկու գրողներն էլ, կրակոցները երգի ու երաժշտության միջոցով դադարեցնելով, մեծ վարպետությամբ ցույց են տվել շատ նուրբ ու հետաքրքիր մի երևույթ. այն, թե որքան մոտ ու հարադատ է երկու ժողովուրդների արվեստն իրար:

Դիպուկ է ասել ն. Զորյանը. կարելի է որոշել ադրբեջանական և հայ ժողովուրդների միջև եղած հողային սահմանները, սակայն նրանք իրենց կու-

³ Խորհրդային գրականություն, 1935, № 1, էջ 3:

⁴ Ս. Զորյան, Պատերազմ, Պետհրատ, 1925:

սուրբաշուքի և արվեստով այնքան հարազատ ու մոտ են իրար, որ անհնարին է պարզել նրանց բարոյական և հոգևոր սահմանները:

Թե՛ Մամեզկուլիզագեի և թե՛ Զորյանի պատմվածքներում նկարագրվող դեպքերը տեղի են ունենում նույն ժամանակամիջոցում, նույն կյանքից են առնված երկուսի թեմաներն էլ: Դրանք նման են իրար նաև սյուժեի տեսակետից: Սակայն իրենց ստեղծագործական առանձնահատկություններով միանգամայն տարբեր ու ինքնատիպ երկեր են, որտեղ նկատելի է դրանց հեղինակների անհատական ոճի կնիքը:

Պատմվածքների նմանությունը բացատրվում է նկարագրվող քաղաքական-հասարակական դեպքերի վկա երկու ղեմավարտ գրողների հայացքների նույնությունամբ, գաղափարների և նպատակների ընդհանրությամբ:

Սովետահայ արձակույթում ռեալիզմի ակնհայտորեն ներկայացուցիչ, անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի զոհ Ալիսել Բակունցը իր տասնամյա ստեղծագործական կյանքի ընթացքում տարբեր թեմաներով գրված մի քանի երկերի մեջ արժարժեք է հայ և ագրբեջանական ժողովուրդների բարեկամության հարցերը:

Բակունցից առաջ հայ գրականության մեջ այդ թեմայով մի շարք երկեր ստեղծվել են: Սակայն Բակունցը իրենից առաջ ասվածներից ոչ մեկը չի կրկնել և իրեն հատուկ վարպետությամբ ստեղծել է միանգամայն նոր, ինքնուրույն երկեր: «Բակունցը,—ասել է Իսահակյանը,—մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է: Նրա երկերի վրա անհատական կնիք է դրված»:

Բակունցի ստեղծագործությանը նոր թափ բերող և նրան որպես մի ռեալիստ արվեստագետի է՛լ ավելի բարձրացնող «Եղբայրության ընկուզենիները» վիպակը թե՛ հեղինակի ստեղծագործության և թե՛ ամբողջ սովետահայ արձակում հայ և ագրբեջանական ժողովուրդների բարեկամությանը նվիրված ամենարժեքավոր երկերից մեկն է: Վիպակում նկարագրված է դաշնակների և մուսավաթականների տիրակալության ժամանակ հայ և ագրբեջանցի աշխատավորների վերին աստիճանի ծանր վիճակը: Երկու ժողովուրդների իրար հետ կապում է միանման տնտեսական և իրավական վիճակը: Վիպակում քաղաքական մեծ սրությամբ է պատկերված ժողովուրդների բարեկամությունը, որը սերտորեն առնչվում է հումանիստական և ինտերնացիոնալիստական գաղափարների հետ: Երկու ժողովուրդների շատ կերպարներ ստեղծած մեծ արվեստագետը իր «Եղբայրության ընկուզենիները» վիպակում կենդանություն է տվել մեր ժողովուրդների եղբայրությունը արտացոլող ռեալիստական հուզիչ պատկերների: Այդ երկում նա պատկերել է դեռևս երիտասարդ ժամանակ Զանգեզուրում տեսած ու լսած պատմական ճշմարտություններն, այն ահավոր վիճակը, որ ստեղծվել է մուսավաթականների և դաշնակների ստոր քաղաքականության հետևանքով: Միանգամայն ճշմարտացի ու ռեալիստորեն է նկարագրված հայ Աթա ապոր և ագրբեջանցի Օրուջի բարեկամությունը: Աթա ապոր և Օրուջի բարեկամությունը շատ բանով նման է Ալլահվերդու և Իմամվերդու («1905 թվականին»), Նաբու և Հայրապետի («Զանգեզուր») բարեկամությանը: Այդ աշխատավոր մարդկանց

իրար հետ միացնում է և բարոյական ընդհանուր գծերը, ավելի ճիշտ, նրանց միանման ապրելաձևը:

Այգ աշխատավոր գյուղացիները թեպետ նյութապես աղքատ են, բայց բարոյապես բավական հարուստ են: Սովոր, կարիքը, վերին աստիճանի ծանր կյանքը այգ մարդկանց հուսահատության է հասցնում, սակայն ամենածանր պահին անգամ, նույնիսկ աղգային թշնամանքի հրահրման պայմաններում, երբեք չեն մոռանում իրար, ընդհակառակը, խուրջիններում եղած վերջին պատառ հացը կիսում են իրար հետ:

Խորը լիրիկական հոգեբանական բնույթ կրող «Եղբայրության ընկուղենիները» վիպական մենք տեսնում ենք աշխատավոր գյուղացիների կյանքի ահավոր ողբերգությունների ռեալիստական նկարագրություններ: Կարիքի, սովի, աղքատության և ահավոր հիվանդությունների ժամանակ, երբ աշխատավոր գյուղացիները ծայր աստիճանի հյուծվում են, ուժից ընկնում, այս սարսափելի պայմաններում դաշնակներն ու մուսավաթականները կաշվից դուրս են գալիս նոր աղետներ բերելու ժողովուրդներին՝ աշխատելով թշնամանք սերմանել նրանց միջև: Այդ ծանր օրերին հայ և ադրբեջանցի աշխատավորների միջև ավելի է դրսևորվում հումանիզմը, իրար նկատմամբ մարդկային ջերմ վերաբերմունքը, բարեկամությունը, որը և վիպակի հիմնական սյուժետային գիծն է:

Հեղինակն իր վիպակի թեման առել է քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանից: Քաղաքական դեպքերին ղուգընթաց երկում ցույց է տրված Աթա ապոր և Օրուջի բարեկամությունը: Հենց դա էլ կազմում է վիպակի գաղափարական կենտրոնը:

Ակսել Բակունցը միանգամայն իրավացիորեն մարդկայնությունը տեսել է աղքատ գյուղացիների մեջ: Ադրբեջանցի Օրուջը այն ժամանակ, երբ իր ընտանիքը ծայրահեղ կարիքի մեջ էր, երբ քիչ էր մնում սովամահ լինելու, իրեն ամենից հարազատ ու մոտ մարդ է համարում հայ Աթա ապորը: Իսկ Աթա ապերը մտածում է, որ «Օրեքը երբ տուբանան, պատերազմ էլ լինի, պիտի գնա գետամեջերը, որտեղ մեծ ու փոքր նրան ճանաչում են,— և մի ձիաբեռ բրինձ բերի»⁵: Հենց այդ մտքերի ժամանակ դուռը ծեծում են: Ներս է մտնում Աթա ապոր հին բարեկամը՝ Օրուջը: Նրանք եղբոր պես գրկախառնվում են: Այդ երկու բարեկամների ընտանեկան հարաբերությունները տրված են միանգամայն բնական ու համոզիչ:

Օրուջը իր ձեռքով մշակած, աճեցրած վերջին հույսը հանդիսացող մի բուռ ծխախոտը և կնոջ գործած մի զույգ գուլպաները նվեր է բերում բարեկամին: Իր հայ բարեկամի մոտից տուն վերադառնալիս ընկնում է դաշնակցականների ձեռքը: Ժողովրդի արնախում թշնամիները Օրուջին և մի քանի երիտասարդ հայերի գնդակահարում են: Ցնցող է այդ տեսարանը: «Ինձ թաղեք իմ էս ջահել տղաների հետ,—կանչում է հալևոր Օրուջը: Կեցցե կոմունիստը, կեցցե հեղափոխությունը, կեցցե...—գոչում են երիտասարդ հայերը:

Աթա ապորը շտաբ են կանչում, հարցնում, թե ով է այն թուրքը (ադրբեջանցին—Ջ. Ա.), որ եկել է իր տունը: Նա պատասխանում է. «—Աստված,

⁵ Ա. Կ. Ե. Բ. ա. Կ. Ե. Ե., Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1955, էջ 377:

Արկինք, գետինք, ճրագի նման արդար մարդ է իմ քիրվան, նրանում մեղք չկա՝ չկա:— Բսկ պարոն կոմիսարի «թշնամու երկրից գաղտնի անցնողը կամ լրտես է կամ»... խոսքերին Աթա ապերը պատասխանում է զայրացած. «Ի՞նչ թշնամու երկիր, ի՞նչ լրտես... Կարելի է որ դու չես իմանում, պարոն կոմիսար, բայց արար աշխարհն իմանում է, որ Օրուջն իմ քիրվան է, նրա տունն իմ տունն է...»⁶:

Բակունցը կյանքի ճշմարտությունները այնքան վարպետորեն է տալիս, որ նկարագրվող պատկերները բառիս լայն իմաստով ընթերցողի առաջ կենդանանում են:

Հանձին Աթա ապոր և Օրուջի կերպարների, Բակունցը տվել է երկու եզրայրական ժողովուրդների անխախտ բարեկամությունը, նրանց վեհ ու ազնիվ գծերը:

Ժողովուրդներին արհեստականորեն իրար հետ թշնամացնելու տարիները վաղուց են անցել: Դաշնակների ձեռքով գնդակահարված աղբրեջանցի Օրուջի և երիտասարդ հայերի գերեզմանի վրա բարձրացող ընկուզենիները, սնվելով հայ և աղբրեջանցի աշխատավորների արյամբ, աճել, դարձել են երկու ժողովուրդների բարեկամության խորհրդանիշը:

1920—40 թվականներին, սովետահայ գրականության զարգացման առաջին փուլում, մեր ժողովուրդների նախահեղափոխական ժամանակաշրջանի կյանքն արտացոլող երկերում մենք տեսնում ենք շահագործողների լծի տակ հավասարապես ճնշված, ամեն տեսակի փորձություններից ելնող հայ և աղբրեջանական ժողովուրդների սրտառուչ բարեկամությունը:

Այդ երկերում հիմնականում տրված են ընտանեկան-կենցաղային պատկերներ: Դասակարգային հասարակարգում հասարակ մարդկանց՝ աշխատավորների վիշտն ու տառապանքները, ճնշումն ու անվերջ հալածանքները միանգամայն բնական երևույթներ են: Այդ է պատճառը, որ այդ ժամանակաշրջանը պատկերող բոլոր երկերում էլ (թե՛ հայ, թե՛ աղբրեջանական գրականության մեջ) մենք տեսնում ենք աշխատավորների նույն ծանոթ կյանքը, նույն թշվառությունը, նույն կարիքն ու աղքատությունը:

Կարգալուծ այդ երկերը մի անգամ ևս համոզվում ենք, որ հայ և աղբրեջանցի աշխատավորները միշտ էլ կապված են եղել տնտեսական, հասարակական, բարոյական, քաղաքական կապերով: Ինտերնացիոնալ բնույթ կրող քննարկված երկերն իրար հետ շաղկապող հիմնական գաղափարը մեր ժողովուրդների միասնության, դրանց բարեկամության գաղափարն է:

Зарик Алиева

ОБРАЗ АЗЕРБАЙДЖАНЦА В СОЧИНЕНИЯХ АРМЯНСКИХ ПИСАТЕЛЕЙ

Р е з ю м е

Многие армянские писатели—Ав. Исаакян, М. Аразн, С. Зорян, А. Бакунц и другие—героями своих произведений сделали азербайджанцев, создали их яркие и полнокровные образы.

⁶ Ա. Բ ա կ ու ն ց, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1955, էջ 371:

В статье дается анализ рассказов и новелл ряда армянских авторов, в которых отражены дружба армян и азербайджанцев, их взаимные отношения, общность исторических судеб, единство в борьбе за лучшую светлую жизнь. В статье приводятся высказывания азербайджанских авторов о писателях армянах и их произведениях, дается разбор некоторых творений писателей дружественного азербайджанского народа.